

**ՍԻԼՎԱ ԿԱՊՈՒՏԻԿՅԱՆԻ ՄՏՈՐՈՒՄՆԵՐԸ
ՃԱՆԱՊԱՐՀԻ ԿԵՍԻՆ ԵՎ ՀԵՏՈ**

Ա.Ա.ՏԵՐ-ՄԻՆԱՍՅԱՆ

80-ական թվականների վերջերին սկսված ազգային-ազատագրական պայքարի հասունացման գործում մեծ է հատկապես վերջին տասնամյակների հայ գրականության գերը: Հասարակական կարծիքի ձևավորման մյուս ասպարեզները (պատմագրությունը, հրապարակախոսությունը և այլն), առավել կոնկրետ լինելու պատճառով, այդ տարիներին գրեթե չէին կարող դուրս գալ կոմունիստական գաղափարախոսության պարտադրած շրջանակներից: Բացի այդ, ի տարբերություն գիտական կամ հրապարակախոսական հոգվածների՝ ամենաընթերցվողը և ամենամեծ լսարան ունեցողը գրական երկն է:

Անհատի պաշտամունքի տարիներին նույնիսկ պատմավեպեր գրելու (էլ չենք ասում տպագրելու) համար հայ գրողը պետք է ունենար «վերեների» թույլտվությունը, որը 30-ական թվականներին հնարավոր չէր ձեռք բերել, և որը միայն Երկրորդ աշխարհամարտի ժամանակ, այն էլ եզակի բացառությամբ, տրվեց միայն Ստեփան Զորյանին ու Դերենիկ Դեմիրճյանին: Նրանք լավագույնս օգտագործեցին այդ հնարավորությունը և իրենց վեպերում կարողացան նրբորեն զարգացնել ազգային-ազատագրական պայքարի և անկախ պետականության գաղափարները:

Բարձր ու հակասական է եղել նաև 30 - 40-ական թթ. ասպարեզ մտած բանաստեղծների՝ Հովհաննես Երրազի, Պարույր Սեակի, Համո Սահյանի, Վահագն Դավթյանի և ուրիշների ստեղծագործական ուղին: Նրանք ստիպված են եղել հաղթահարել ոչ միայն խորհրդային պետության և տիրող կուսակցության գաղափարախոսական կաղապարները, այլև տարբեր տասնամյակների՝ հաճախ իրարամերժ քաղաքական տատանումները: Նշված սերնդի հայ քնարերգության ինքնատիպ դեմքերից է նաև Սիլվա Կառուտիկյանը, որի գրական ճակատագիրը հիմնականում նման է իր սերնդակից բանաստեղծների անցած ստեղծագործական ուղուն: Նա էլ շատերի պես գրականություն է մտել սոցոեալիզմի պարտադրած գրական քաղաքականության տարիներին (30-ական թթ. վերջ - 40-ական թթ. սկիզբ), ոգևորությամբ բանաստեղծություններ է ձուներ սոցիալիստական հայրենիքին ու նրա առաջնորդներին, երգել երջանիկ ներկան և առավել երջանիկ ապագան, բնածին տաղանդը երբեմն վատնել անցողիկ, առօրյա թեմաների վրա, բայց կամաց-կամաց սեփական արյան կանչով հայտնաբերել իր գոյության հիմքը, մտել հայ դարավոր գրականության դժվարին, բարդ, բայց ճշմարիտ ուղին:

Տակավին 1984թ. իր գրքերից մեկի առաջաբանում բանաստեղծուհին խոստովանում է. «...ամեն ինչ չէ, որ զետեղված է այնտեղ (եռահատորյակում - Ա.Տեր-Մ.), և զետեղվածներից բոլորը չեն, որ գոհացնում են այժմյան իմ ճաշակը և ըմբռնումները: Զետեղել եմ, որովհետև կարծում եմ, որ դրանք,

Այս մասին տե՛ս Ա. Տեր-Մինասյան, Հովհաննես Երրազի հայրենասիրական քնարի աշխարհայացքային չերտերը (Բանբեր Երևանի Համալսարանի, 2000, № 2, էջ 42 - 55):
Տե՛ս Վ. Գաբրիելյան, Դասականների ժամանակը, Ե., 1997, էջ 187 - 229:

զաղափար տալով իմ գրական ընթացքի այս կամ այն կայանի մասին, կօգնեն առավել հանգամանորեն հասկանալու այդ ընթացքի կեռամաններն ու ուղղագծերը»³։

Գրական մուտքի տարիներին լինելով «մեծ Հայրենիքի»՝ ԽՍՀՄ-ի երգիչը՝ Կապուտիկյանը հետագայում աստիճանաբար հայտնաբերել է «փոքր»՝ իսկական Հայրենիքը և հնչեցրել է Հայ բանաստեղծի Հայրենանվեր երգը։ Թող որ այդ տողերը սկզբնական շրջանում լինեին ընդամենը Հայրենի բնության, Արարատյան դաշտի, նույնիսկ իրենց տան բակում աճող թթենու գովքը, միևնույն է, ընթերցողին ներկայանում էր ինքնատիպ մի արվեստագետ, որի ամեն տողում տրոփում էր ազգի ու Հայրենիքի սիրով ապրող, հարազատ ժողովրդի անցյալով ոգեշնչված ու ներկայի վրա այնքան դողացող բանաստեղծուհու սիրտը։ Բանաստեղծուհու, որը վաղ թե ուշ պիտի խոստովաներ, որ իր համար իսկական, մեծագույն ու անխաբ երջանկությունն այն է, որ ինքը դուստրն է մի հինավուրց ցեղի ու ժառանգորդը՝ նրա դարավոր ցավի։

Քեզնի վեմ ապրում,
Եվ ես բանաստեղծ,
Օրհնում եմ բախտս հետին այս երգով,
Որ աշխարհի մեջ, երկնքի ներքո
Աշխարհը թողած՝ ծնվել եմ այստեղ
Ու որովհեմ եմ քո...⁴

Այս տողերը գրվել են 1956 - 60 թվականներին։ Իսկ մինչ այդ Հայրենիքը երգելու, ժողովրդի Հայրենասիրական ոգին բարձր պահելու հնարավորությունները սուղ էին Հայ բանաստեղծների համար։ Եվ նրանք հաճախ դիմում էին պատմական թեմաներին, Հայրենի բնապատկերներին և, իհարկե, մեսրոպյան լեզվին, որին նվիրված բանաստեղծությունները գրեթե բոլոր պոետները դիվանագիտորեն քաղաքականացնում էին՝ վերածելով Հայաստանի ու Հայրենասիրության գովքի։ Կես Հարյուրամյակից ավելի է անցել Ս.Կապուտիկյանի «Խոսք իմ որդուն» բանաստեղծության ծննդից, կես դար շարունակ այն դարձել է Հայրենիքում և Հայրենի եզերքից հեռու ապրող ամեն իսկական Հայի աղոթախոսքերից մեկը։ Այս բանաստեղծության մեջ Հայոց լեզուն, Հայաստանը և Հայ ժողովուրդը նույնացված են.

Կտրել է մա, հանց աստղալույս,
Երկինքները ժամանակի,
Շառաչել է խռովահույզ
Սլացքի հետ հայկյան նետի,
Եվ Մեսրոպի սուրբ հանճարով
Դարձել է գիր ու մագաղաթ,
Դարձել է հուլյս, դարձել դրոշ,
Պահել երթը մեր անաղարտ... (էջ 24):

Սիրելի Հայոց լեզուն, նշանակում է սիրել ազգը, Հայրենիքը։ Անխաթար պահել այդ լեզուն և պաշտպանել օտարներից, նշանակում է պաշտպանել

³ Սիլվա Կապուտիկյան, Երկեր 3 Հատորով, Հ. 1, Ե., 1984, էջ 5:

⁴ Նույն տեղում, էջ 101: Այսուհետև երկերից արվող մեջբերումների էջերը կնշվեն բնագրին կից:

Հայրենիքը: Իսկ Հայրենիքը և մայրենին պետք է պաշտպանել նույնքան անձնազոհությամբ, որքան Հարազատ մորը, ավելի՛ քան Հարազատ մորը.

...Թե մոռնա՞նք անգամ մտքից հաճես,
Քո մաշկը լեզուն չմոռանա՛ս... (25):

50-ական թվականների վերջերից և հատկապես 60-ականներից սկսած՝ Կապուտիկյանը զրել է բազմաթիվ Հայրենաշունչ բանաստեղծություններ, հոգվածներ, արձակ երկեր, որոնք վերջին տասնամյակների Հայ պատմահայրենասիրական գրականության բարձրարժեք նմուշներից են: Սակայն բանաստեղծուհու Հայրեններգության ամենաակնառու դրսևորումը «Մտորումներ ճանապարհի կեսին» պոեմն է: Սա Կապուտիկյանի՝ Հայրենիքի, Հայ ժողովրդի, նրա անցած ուղու, ներկայի ու գալիքի մասին տարիներով ամբարված ամենաանկեղծ խոսքն է՝ մատուցված քնարական կատարելությամբ: Սա մի ստեղծագործություն է, որը միանգամայն Համահունչ էր Հայ ժողովրդի՝ տվյալ տարիների մտածողությանը: Սա մտորում է նաև ժողովրդի անունից, որի մեջ թեև տարտամորեն արթնանում էր ազգային ինքնագիտակցությունը, բայց որը դեռ չգիտեր իր հերթական քայլը: 1915-ի եղեռնի մասին բարձրաձայն խոսելն իսկ քայլ էր, քայլ դեպի գաղափարական Հասունացում: Այդ տարիներին նույնիսկ Համոզիչ և բավարար էր թվում այն «Հաղթանակի» արձարժումը, որ ըստ բանաստեղծուհու՝ տարել էր Հայ ժողովուրդը՝ եղեռնից հետո իր մեջ ուժ գտնելով ապրելու ու շենացնելու Հայրենիքի փրկված մի բեկորը՝ ինորհրդային Հայաստանը:

Ժողովուրդը պետք է Հավատար այդ բարոյական Հաղթանակին և լցվեր Հպարտությամբ ու Հավատով, որպեսզի իր մեջ Հասունանար հերթական քայլի գիտակցումը ամբողջական Հայրենիքի փրկության գաղափարը: Ինչպես Հազարամյակներ շարունակ, դարձյալ դյուրին չէր լինելու այդ ուղին՝ Հայ ժողովրդի լինելիության և պայքարի ուղին, բայց լինելու՝ էր... Լինելու էին և՛ 1965թ. ապրիլի 24-ը, և՛ արցախյան հերոսամարտերը... և՛ դեռ լինելու՝ են...

Իսկ մինչ այդ պետք է դրվեին ազգային վերագարթոնքի հիմնաքարերը: Հայ քնարերգության մեջ այդ հիմնաքարերից էին հատկապես Հ.Շիրազի «Հայ դանթեականը», Պ.Սևակի «Անլուծի զանգակատուն» և Ս.Կապուտիկյանի «Մտորումներ ճանապարհի կեսին» պոեմները, նրանց և սերնդակից այլ քնարերգուների Հայրենաշունչ բանաստեղծությունները:

Կապուտիկյանի պոեմում ամբողջ մի սերնդի հոգեվիճակի ճշմարիտ, բայց սեղմ գնահատականն են սկզբնամասի հետևյալ տողերը.

Ինձ համար կյանքը սկիզբ էր առնում
Իմ ծնված օրո՛վ, իմ ծնված օրի՛ց.
Ինձ համար կար լուկ երկու սահմանում
«Բանվոր ու բուրժույ» և ուրիշ ոչինչ:
Բոլոր հի՛ն ու փակ դռների համար
Ինձ այնպես հե՛շտ էր գտնել բանալի.
Ձկար ազգ ու ցեղ, փոքր ու մեծ չկար,
Հա՛շտ էր իմ հոգին ու հիացքով լի... (95):
...նվ ես իմացա, իմացա՝ խոռոպ,

Դրանից առաջ եղե լ աշխարհում.

Տասնհինգ թիվ է անցել աշխարհով... (97):

Ճիշտ է, պոեմը վերնագրված է «Մտորումներ ճանապարհի կեսին», սակայն այն հիրավի մի նոր սկիզբ է բանաստեղծուհու համար, սկիզբ՝ կեղծ ու բարձրագույն լողունների ճնշումներից զգալիորեն ձերբազատվելու, դեպի իր անհատականության ու իր ժողովրդի էություն խորքը նայելու և ճշմարիտ արվեստի ակունքներին մերձենալու: Երբեմնի պիոներ և կոմերիտական աղջիկն ասես արթնացել է բարձրահունչ երգերի թմբերից և հասկացել, որ իր սերնդի «երջանիկ ներկան» ոչ այլ ինչ է, քան խաբկանք: Եվ խաբկանք կմնա այնքան ժամանակ, քանի դեռ հայ ժողովուրդը չի «խաղաղել Հոգին իր խոռով»: Անցնելով 1915թ. եղեռնի նկարագրություններին՝ Կապուտիկյանը այնպիսի խոր ցավով է վերապրում իր ժողովրդի ողբերգությունը, որ ինքն էլ, ընթերցողն էլ մոռվի տեղափոխվում են դարասկզբի արյունալի օրերը, անձամբ ապրում եղեռնի տագնապները, ցավով ու զայրույթով տեսնում ու դատապարտում աշխարհի քար անտարբերությունը Հինավուրց մի ժողովրդի ցեղասպանության հանդեպ, և բանաստեղծուհու՝ քաղցրախոս տողերի վարժված լեզուն մի պահ պապանձվում է կատարված անարդարություններից ու պատրաստ է պարզապես բառացի ժայթքելու Միամանթոյի հայտնի տողերը.

Ով արդարություն, ես քքե՛լ եմ քո... (98):

Սակայն հենց այստեղ էլ, ցավոք, անսպասելիորեն թուլանում է բանաստեղծուհու խոսքի ուժը: Հանկարծ գլուխ է բարձրացնում նորից երիտասարդ օրերի պիոներն ու կոմերիտուհին.

Բայց կանգնի՛ր, կանգնի՛ր, կարկամի՛ր լեզու,

Ո՛չ, ես չեմ ծնվել անեծքի համար,

Ես միշտ բարեկամ խոսքի՛ եմ սովոր.

Ես մանուկ օրից հավատով, սիրով

Ջնգուն երգել եմ «Ինտերմացիոնալ»... (98):

Միանգամայն բնական Հոգեվիճակ, որ բնորոշ էր ազգային զարթոնքի ուղին ոտք դրած, բայց տակավին այդ ուղու ոլորաններին ու որոգայթներին անձանոթ մի սերնդի համար, որն անկեղծորեն, այո՛, որդեգրվել էր ազգերի եղբայրության և իրավահավասարության գաղափարներին: Սակայն պարզ էր նաև, որ այդ ազնիվ գաղափարները պետական լողունգ դարձրած Հզոր տիրակալությունը ամենևին չէր պատրաստվում նպաստել ժողովուրդների ազատ ինքնորոշմանն ու նվիրական ևրազանքների իրականացմանը: Ավելին, տակավին թարմ էին ստալինյան բռնապետության տարիների սարսափները, երբ սեփական ժողովրդի կամ «փոքր» Հայրենիքի մասին գրված ստեղծագործությունների հեղինակները որակվում էին «ազգայնամուլ» վտանգավոր պիտակով և ենթարկվում վայրագ հետապնդումների, աքսորի, ընդհուպ ֆիզիկական ոչնչացման: Ու թեև «ժողովուրդների Հոր և առաջնորդի» մահից հետո ֆիզիկական հաշվեհարդարները հիմնականում դադարեցվեցին, բայց գրաքննությունն իր սև գործը շարունակում էր կատարել նաև հետագա տարիներին: Ուստի իր իսկ մտքի հակասությունը տանջում է պոետին.

Ուրեմն ինչպե՛ս, հեղեղներն արյան

Թողնել որ ծածկի՝ մոռացման փոշին.

Խլացնե՛լ սիրտը, որ էլ չլսվեց
 Վրդով ձայները խորքերից ճառնած,
 Փակե՛լ աչքերը, չգգա՛լ, չընդվզե՛լ,
 Մոռանալու՛ւ տալ, անգամ մոռանա՛լ... (98):

Հարցադրումն այնքան շեշտակի է, որ այլևս անհնար է խուսափել հստակ, աներկբա ու միանշանակ պատասխանից: Մյուս կողմից, սակայն, իրոք հեշտ չէր մատնանշել այդ բարդագույն հարցի միակ պատասխանը, որովհետև թե՛ Հայ արվեստագետները, թե՛ ժողովուրդն ինքը դեռևս հոգեբանորեն պատրաստ չէին կտրուկ քայլերի: Երկու աշխարհամարտ, սով, համաճարակ ու բռնություններ տեսած, արյունաքամ վերքերից նոր-նոր ապաքինվող ժողովրդի համար ամենակարևորը ֆիզիկական բնաջնջման վտանգի վերացումն էր ու խաղաղ աշխատանքը: Այս առաջնային ու կենսական պահանջների բավարարումը և՛ հիմք էր հետագա քայլերի համար, և՛ հոգեբանական արգելք: Այո՛, արգելք, որովհետև այս ձեռքբերումների հանդեպ երախտամոռությունը, թվում էր, կխաթարեր հազարամյակներ շարունակ ասպետականությունը որպես իր լինելության հիմք՝ ընտրած ժողովրդի ազնիվ նկարագիրը: Ահա թե ինչու խորհրդային Հայրենիքի «բախտավոր» զավակները, որոնք վարժվել էին վերամբարձ ինքնագոհության և ԽՍՀՄ-ի սահմաններից դուրս ապրողներին երջանիկի ներողամիտ բարձունքից խղճահարություն մայելուն, հանկարծ իրենք են Հայտնվում դժվարին եզրահանգումների առաջ: Եվ այս պոեմում Կապուտիկյանի կողմից նշված խնդրի լուծումը, որը հիմնականում համընկնում է սերնդի մյուս բնաստեղծների՝ այդ տարիներին ունեցած կարծիքին, ավելի շատ դարասկզբի ողբերգությունների և դրանց հետևանքով Հայրենի եզերքների կորստի հետ թեկուզ առժամանակ համակերպվելն է, քան թե այն «հաղթանակը», որին ապավինում էին՝ պարզապես այլ ելք չտեսնելով: Ինչ խոսք, Հայկական պետականությունը, ինչպիսին էլ որ այն եղել է կամ կլինի, հերավի մեր ժողովրդի հաղթանակն է՝ ի հեճուկս նրա թշնամիների, որոնք ցեղասպանության միջոցով ձգտում էին իսպառ բնաջնջել Հայությունը: Եվ երբեք չպետք է ուրանալ խորհրդային տարիներին ձեռք բերած հոգևոր, մշակութային և տնտեսական հաջողությունները: Ի վերջո, թող հակասական չթվա, հենց դրանց հիմքի վրա են ձևավորվել ազգային նորոքյա զարթոնքն ու վերելքը: Սակայն իրական Հայրենիքի միայն մի փոքրիկ տարածքում պետականության հաստատումը դեռևս ամբողջական հակակշիռը չէր այն մեծածավալ ողբերգության և անամոք ցավի, որոնց հետևանքով Հայ ժողովուրդը կորցրեց ոչ միայն Արևմտյան Հայաստանն ամբողջովին, այլ նաև Արևելյան Հայաստանի մի մասը: Բնականաբար, այս պոեմում, ինչպես նաև այդ տարիներին այլոց կողմից գրված նմանատիպ երկերից շատերում, փաստորեն չի գտնված Հայ ժողովրդի «խուով հոգին» «խաղաղելու» իրական ելքը: Հովհաննես Երեզնի իր «Հայոց դանթեականի» տակավին անտիպ էջերում, ճիշտ է, պահանջում էր Հայոց բռնազավթված հողերի վերադարձը, բայց հույսը դնում էր մարդկության ու ազգերի խղճի վրա, որն այնպես քնած էր դարասկզբի Հայկական կոտորածների ժամանակ: Նույնը կարելի է ասել Հայ քնարերգության դարակազմիկ երկերից մեկի՝ «Անլուելի զանգակատան» մասին: Նկարագրելով Հայոց եղեռնը՝ Պարույր Սևակը հանգում է մի կարևոր եզրակացության. կոտորածի զոհերն ավելի երջանիկ էին, քան ողջ մնացածները, նույնիսկ նրանք, ովքեր ծնվել էին եղեռնից հետո և, ի

տարբերությունն Կոմիտասի՝ ոչ թե մեկ անգամ, այլ ամեն օր են ցնորվում: Եվ համազգային խելագարությունը կշարունակվի այնքան ժամանակ, քանի դեռ

...Մասիսն, այո ...
...Մեզ անխղճաբար պիտի գրգռի՝
Մեր փակված վերքը նորից-նոր բացա.
Մագնիսի նման անվերջ ձգելով
Գեթ մոտիկանալ թույլ չտա բնավ...⁵

Սակայն, կրկնում ենք: Բանաստեղծներից ոչ ոք տակավին չէր մատնանշում ազգային երազանքների իրականացման և տասնամյակների մղձավանջից ձերբազատվելու իրատես ուղին: Բայց նշված և բազմաթիվ այլ ստեղծագործություններ արթուն էին պահում ազգային ոգին, հայ ժողովրդին ստիպում չհամակերպվել կատարվածի հետ և ելք որոնել՝ ղրսևորելու իր կամքը: Եվ ժողովուրդը ղրսևորեց 1965թ. ապրիլի 24-ին՝ ցնցելով խորհրդային պետության միասնական գաղափարախոսության հիմքերը: Համաժողովրդական այդ հզոր պոռթկումի կազմակերպիչների թվում էին հենց նրանք՝ նշված բանաստեղծները:

Իսկ ի՞նչ ելք է տեսնում Կապուտիկյանը իր «մտորումների» հաջորդ հատվածներում: Ձէ՞ որ, այնուամենայնիվ, պետք էր պատասխանել սեփական հարցադրմանը: Բանաստեղծուհին առաջարկում է «Հոգին խաղաղելու» և թշնամուն «Հաղթելու» մի բանաձև, որը թերևս միայն մեկ ակնթարթ կարող էր բավարարել ազգային վերագարթոնքի ուղին բռնած ժողովրդին:

Դու պիտի առնե՛ս վրեժդ անհուն,
Պիտի խաղաղե՛ս հոգին քո խռով,
Բայց ո՛չ արյան դեմ կոչելով արյուն
Եվ մահի դիմաց մա՛ն սերմանելով...
...Դու պիտի վրեժ առնես ապրելով,
Ապրելով համառ, հազարապատիկ...
...Ավեր Վանի դեմ՝ քո երևանով...
...Մարութա վանքի մարած բոցի տեղ
Յոթն աշխառն ծնող քո յոթ կայանով.
Տաթևի կուրցա՛ծ դպրանոցի տեղ
Բյուրակնով նայող քո Բյուրականով... (99):

Երբ Կապուտիկյանը ավեր Վանին որպես հաղթանակ հակադրում է ծաղկուն Երևանը կամ Մարութա վանքի ավեր դպրանոցին՝ Բյուրականի աստղադիտարանը և այլն, ղրանով ասես հաշտվում է առաջինների անվերադարձ կորստի հետ, և քնարական հերոսի խոսքը դադարում է բռնազավթված հայրենիքի տիրոջ խոսք լինելուց: Մինչդեռ, Կապուտիկյանը և՛ այս պոեմը գրելուց առաջ, և՛ ղրանից հետո ամենևին էլ չի կարողացել խաղաղեցնել հայ բանաստեղծի իր խռով հոգին:

Այս պոեմի քնարական հերոսը դեռևս չի հասել իր ժողովրդի հավաքական տենչերն ու կամքը մինչև վերջ արտահայտելու բարձրակետին՝ ազգային-ազատագրական պայքարի ու արդար վրեժի կոչին: Սակայն հենց այս պոեմի գաղափարների զարգացումը դարձան հետագայում, հատկապես 1965թ. ապրիլի 24-ից հետո ծնված, մի շարք բանաստեղծություններ,

⁵ Գ. Սևակ, Երկերի ժող. 6 հատորով, հ. 4, ե., 1973, էջ 210 - 211:

որոնցում, ճիշտ է, բառաշիրտներն աղգային-ազատադրական պայքարի կոչեր չկան, սակայն թափանցիկ ենթատեքստերը կասկած չեն թողնում, որ բանաստեղծուհին ի վերջո հանգել է իրականության հետ չհաշտվելու և ըմբոստություն զաղափարներին՝

Այսպես, «Մտորումներ» ծնունդից շուրջ տասը տարի անց, «Ընդդիմախոսություն» բանաստեղծության մեջ, խոսելով Արարատ լեռան մասին, բանաստեղծուհին պահանջատիրոջ ընդգծված շեշտով գրում է.

Այն ո՞վ է ասում,
Որ Արարատը ձերն է ու ձերը,
Անհեթեթ պատրա՛նք.
Քարտեզն է ձերը,
Քարտեզի վրա չափած-գծածը...
...Մոխի ըն է ձերը...
...Մեզ համար գործող ճրագուհի է նա,
Խառնարա՛ն ոգու,
Որ դար ու դարեր
Մեր ընդվզումի կրակն է ժայթում
Եվ բորբոքում մեր ցասո՛ւմը կենաց (105):

Ուշադրություն դարձնենք մեջբերված տողերի ոճավորման տարբերություններին: Առաջին նախադասությունը Հոեոտորական Հարց է. «Այն ո՞վ է ասում, որ Արարատը ձերն է ու ձերը», որն ինքնին պարունակում է ժխտական պատասխան: Սակայն բանաստեղծը չի բավարարվում Հոեոտորական Հարցով և նախընտրում է մանրամասնել այն: Հայրենիքը, որի Հավաքական կերպարը բանաստեղծության մեջ Արարատն է, պատկանում է նրան, ով դարեր շարունակ իր մտքի, ոգու և մշակույթի հետքերն է թողել այդ տարածքում: Նվաճողի համար այն ֆիզիկական տարածք է միայն. «Քարտեզն է ձերը, քարտեզի վրա չափած-գծածը... մոխի ըն է ձերը...»: Մինչդեռ իսկական տիրոջ համար Արարատը ոչ միայն ոգու խառնարան է, այլև ազատության ու պայքարի խորհրդանիշ: Ուշագրավ է վերջին նախադասությունների բայական ժամանակների ընտրությունը, որն էլ ավելի է խտացնում բուն ասելիքը: Ժայթել և բորբոքել բայերը օգտագործված են ոչ թե անցյալ, այլ ներկա ժամանակաձևերով: Այսինքն՝ ինչպես դար ու դարեր, այնպես էլ այսօր Հայ ժողովուրդը երազում է իր ինքնության ու լինելության ամրապնդման ու պայքարի մասին, և Արարատը դարձյալ

Մեր ընդվզումի կրակն է ժայթում
Եվ բորբոքում մեր ցասո՛ւմը կենաց (105):

1973թ. գրած «Հաճախանք» բանաստեղծության մեջ դարձյալ նույն խոռվքն է ու ցավը, դարձյալ նույն Հարցը, որ մեկուկես տասնամյակ առաջ տրվել էր «Մտորումներ» տողերում: Բայց այս անգամ չկա ինքնահաշտեցման նախկին բանաձևը: Հարցն այստեղ առավել արմատական է դրված. ամբողջ մի ժողովուրդ գտնվում է դանիական արքայազնի Հայտնի Հոգեվիճակում, որի շուրթերին անվերջ տառապում է լինել-չլինելու Հարցադրումը.

...Դավիթ սպանված արքայի ճերմակ ուրվականի պես...
...Կանգնել է մեր դեմ,

Նա
Մեր հայր լե՛ռը
Քարացած, անխոս.
Սպասող աչքը հառած մեզ վրա...

Օ՛, Համլե տ, Համլե տ,
Տե ս, դարեր հետո
Մեր այս խեղճ հոգին
Նույն հանախանքն է չարչրկում նորից
Արդյոք ի՞նչ անել,
«Տանել գոռ բախտի պարսաքարե՛րը,
Թե՛՝ զենք վերցնել՝ վիշտ ու դավի դեմ՝
պատերազմելու»... (341):

Ինչպես նախորդ բանաստեղծության մեջ, այստեղ էլ բուն ասելիքը խտացված է Հատկապես վերջին տողերում: Համլետյան մենախոսության հենց այդ խոսքերով բանաստեղծությունը եզրավակելու մեջ մեծ իմաստ կա: Նախ՝ որովհետև կասկածի տակ է դրվում խաղաղ ճանապարհով ազգային ծրագրերն իրագործելու հնարավորությունը: Մյուս կողմից, ինչպես Համլետը պիեսի սկզբում, Կապուտիկյանը ևս տակավին միանշանակ պատրաստ չէ վճիռ ընդունել՝ հօգուտ «զենք վերցնելուն»: Ավելին, Հայտնի է, որ Շեքսպիրի հերոսն իր մենախոսության հաջորդ տողերում լրջորեն ծանրութեթև է անում իր անելիքները անդրադառնալով ոչ միայն արդար վրեժխնդրության անհրաժեշտությանը, այլև հնարավոր ինքնակործանման տարբերակին: Հայտնի է նաև, թե որքան մեծ տառապանքից ու հոգեկան տվայտանքներից հետո է ընդունում իր վճիռը:

Կապուտիկյանի բանաստեղծությունը ավարտվում է առանց մենախոսության այդ հատվածներից անդրադառնալու, բայց նյութի ընտրությունը ենթադրում է նաև դրանց արձագանքը, որը Շեքսպիրի երկում հնչում է այսպես.

Տանե՛լ գոռ բախտի պարսաքարերը և սլաքները,
Թե՛՝ զենք վերցնել ցավ ու վշտերի մի ծովի ընդդեմ
Եվ, դիմադրելով՝ վերջ տալ բոլորին:
Մեռնել, քնանալ, ոչ ինչ ավելի...

Այսինքն, սա այն պահն է, երբ Հատկապես 1965-ից սկսած հոգևոր վերելք ապրող Հայ ժողովրդին այլևս ձեռնտու չէ տանել գոռ բախտի պարսաքարերը, սակայն նա չի պարզել նաև, թե ընդվզումի հետևանքով ինչեր են սպասվում իրեն: Աշխարհայացքային այս փուլում, ի տարբերություն նախորդ շրջանի ստեղծագործությունների, բանաստեղծուհին չի շտապում դեղատոմս առաջարկել: Պարզապես ընդգծված չեչուով նույնացնում է իր ժողովրդի և շեքսպիրյան հերոսի հոգեվիճակները լինել-չլինելու հարցի պատասխանը թողնելով իրեն՝ ժողովրդին:

Կապուտիկյանի Հայրենասիրական քնարի բարձրակետերից մեկն է «1965 թվական, Ապրիլի 24» բանաստեղծությունը գրված 1970-ին: Այդ պատմական օրվա, մինչ այդ նախատիպը հունեցող համազգային ցույցի մասին այժմ անկախ պետականություն ունեցող երկրի քաղաքացու դիրքից

⁶ Վ. Շեքսպիր, երկեր, Ե., 1991, էջ 61:

Հեշտ է բարձրաձայն խոսել և քաղաքական գնահատականներ տալ կատարվածին: Մինչդեռ գաղտնիք չէ, որ խորհրդային պետության և խորհրդային Հայաստանի այն ժամանակվա ղեկավարների կողմից համաժողովրդական հզոր շարժումը որակվեց ամենաանվայել ձևակերպումներով և փորձ արվեց հերթական անգամ կեղծել Հայոց պատմությունը: Ոչ միայն բանաստեղծի, այլև մեծ քաղաքացու արիությունն էր պետք կատարվածի իրական գնահատականը տալու համար, ապացուցելու, որ դա իրոք ազգային զարթոնքի հզոր բռնկում էր՝ թեև տարերային ու անվերահսկելի, բայց իր խորքում ազնիվ ու արդար:

Այստեղ ամեն բառ, ամեն տող այդ պատմական օրվա տիպական բնութագրումն է: Առավոտյան Կոմիտասի շիրմի մոտ արվեստագետ մտավորականների կազմակերպած՝ 1915թ. եղեռնի զոհերի հիշատակին նվիրված միտինգը մի քանի ժամում վերածվեց համազգային հզոր ցույցի, որի մասնակիցներից շատերն արդեն չգիտեին անգամ, թե ինչպես է սկիզբ առել այն, բայց հարյուր հազարավոր մարդիկ գնում էին բողոքելու, ընդվզելու՝ նույնիսկ կարգին չգիտակցելով, թե ում դեմ...

Եվ -- գնո՛ւմ էից...

Սասնա Ռավթի պես խակ պատանիներ,

Դավթի նման ծուռ,

Բայց մե՞ն մի օրում այրացա ծարղեն,

Երակների մեջ՝ զարթնած արյունը ու զարթնած ոգին,

Աչքերում՝ կսկիծ, բողոք ու հարցում՝

Դե՞ գնո՛ւմ էից... (340):

Այնուամենայնիվ, մի բան պարզ էր, որ տասնամյակների հարկադիր լուծթյունը խախտած ժողովրդի բողոքի ալիքն առաջին հերթին ուղղված էր երկրի ղեկավարությանը, որ Ձեռով Օհանին բնորոշ զգուշավորությամբ այդքան տարիներ թաքցրել էր ճշմարտությունը: Հիրավի, մինչև 1965-ի այդ օրը հազվադեպ քչերը համեմատաբար ամբողջական պատկերացում ունեին 1915-ի եղեռնի մասին: Իսկ ապրիլի 24-ն ընդհանրապես չէր հիշատակվում ոչ մի դասագրքում... Ուստի որքան բողոք, նույնքան էլ ցավ կա այս տողերում.

Հորողբե ր Օհան,

Ասա՛, հե՛ր եի՛ր պահել ինձանից

Տեղերանքն իմ հոր, իմ հոր գերեզման,

Իր Ձին-Ջալալին, իր Թուր-Կայծակին...

... -- Ասե՛ք, ո՛ւր եի՛ք պահել մեզանից

Եղելությունը «Եղեռն» անունով... (340):

Բանաստեղծության վերջնամասում ի վերջո տրվում է նաև այդ օրվա ամենակարևոր գնահատականը: Այդ ակնթարթային պոռթկումը հայ ժողովրդի հոգևոր մղումների՝ տարիներով ամբարված մարմնացումն էր, որը վաղ թե ուշ պետք է առարկայանար, և ժողովուրդը պետք է ոտքի ելներ՝ տե՛ր կանգնելու իր արդար դատին.

Գնում էից, որ

Տեր կանգնեն իրենց որբ մեռելներից, որբ շիրիմներից,

Ջոքեն համբուրեն Մարութա վանքի

Մասունքները որբ,

Ետ տանեն հողը և հանեն հողից Թուրը-Կայծակին,

Ետ տանեն քարը և հանեն գոմից Քուռկիկ-Ջալալուն,
Ասեն՝ զորու եմք թամբելու մեր հոր
Վիշապաքաղ ձին,
Ասեն, որ տե՛րն եմք, տե՛րն եմք Սասնա տան
Ու Սասնա դատին:

Ամիսն ապրիլ էր,
Եվ օրը – արդա ր... (341):

Այսպիսով, ինչպես սերնդի մյուս բանաստեղծների, Կապուտիկյանի ստեղծագործություններում, ևս դանդաղ, բայց հաստատապես ամրապնդվում են ազգային իդեոլոգիաների ու նվիրական երազանքների մարմնավորման գաղափարները: Ծիշտ է, նրա տողերում ազգային-ազատագրական պայքարի ուղղակի կոչեր չկան, սակայն 70 – 80-ական թվականներին նրա Հայրենաշունչ շատ բանաստեղծություններ ժողովրդի կողմից ընկալվում էին հենց որպես այդպիսիք: Նմանատիպ գործերից է 1983-ին ժողովրդական Հայտնի «Քելե՛, լաո» երգի մոտիվներով գրված համանուն բանաստեղծությունը: Արտաքինապես պարզ թվացող սյուժեն իրականում բավականին բազմաձայն է: Յոթ քառյակներից առաջին հինգում հեղինակը խոսում է գաղթական ծերունու անունից, որը կսկիծով երգում է ժողովրդական Հայտնի երգը, և «Ձայնի տեղակ ծուխ է ելնում երգից»:

Գիշեր-ցերեկ նույն երգն է իմ ունկերում
Ձայնի տեղակ ծուխ է ելնում այդ երգից.
Ու ծխի մեջ կսկծում է մի ծերուկ
«Քելե՛, լաո, քելե՛ երթանք մեր երգիր» (345):

Հայտնի է, որ ժողովրդական այս երգը ողբ է ու բողոք՝ ծնված կորսված Հայրենիքի կարոտից և այն հետ ստանալու անհուսալիցությունից: Եվ այդ ողբի գաղափարական բացահայտումն են բանաստեղծության առաջին քառյակները: Սակայն վերջնամասում գաղթական ծերունու հոգեվիճակի նկարագրից հեղինակը նրբորեն անցում է կատարում համազգային ու համամարդկային հնչեղության մտքերի և խոսում է արդեն ոչ թե ծերունու (թեկուզ իր նմանների հավաքական կերպարը մարմնավորող), այլ ողջ Հայ ժողովրդի անունից, որի մեջ տարեց տարի հասունանում է ամեն պատենչ և ամեն սուտ փլեյուլ ցանկությունը: Եվ ողբի ու տառապանքի տողերը աստիճանաբար իրենց տեղը զիջում են ընդվզումի ու պայքարի խոսքերին:

...Ինչպե՛ս խեղդենք իս խռովքը Սասնա տան,
Ինչպե՛ս մարենք այսօրան կարոտ, վառք ու կիրք,
Այսքան երազ ինչպե՛ս թաղենք գետնի տակ,
«Իմա՛ լ կեղնի, իմա՛ լ չերթանք մեր երգիր»:

Թե աշխարհում արդարություն կա վերուստ,
Ու թե դաշն են աստված, երկիր ու երկինք,
Պիտի փլվի՛ ամեն պատենչ, ամեն սուտ,
Պիտի երթա՛նք, պիտի երթա՛նք մեր երկիր... (345):

Ավելացնենք, որ ազգային զարթոնքի առաջին տարիներից մինչև օրս անգերազնահատելի է նաև Կապուտիկյան քաղաքացու ազգօգուտ գործունեությունը: Այն հատկապես նոր թափ առավ 80-ական թթ. վերջերին սկիզբ

առած նորորյա ազգային-ազատագրական պայքարի տարիներին, երբ իր քաղաքացիական բարձր կեցվածքով, Հայ բանաստեղծի վսեմ առաքել-յությամբ կանգնեց և կանգնած է իր ժողովրդի արգար դատը օտարներից ու նաև օտարացած յուրայիններից պաշտպանողի դիրքերում: Եվ վստահ ենք, որ Հայ պատմագրությունը անաչառորեն ու անկողմնակալ դեռ կտա այդ դրամատիկ օրերի ճշմարիտ բնութագիրը, այդ թվում նաև՝ ամենայն Հայոց բանաստեղծուհու՝ արդեն քաղաքական գործունեության գնահատականը:

РАЗДУМЬЯ СИЛЬВЫ КАПУТИКЯН НА ПОЛПУТИ

А.А.ТЕР-МИНАСЯН

Резюме

Армянская поэзия 60 – 80-ых гг. сыграла огромную роль в деле пробуждения национального самосознания и формирования идеи независимой государственности. Изучение патристических произведений одного из ведущих поэтов этого поколения Сильвы Капутикян выявляет неоспоримую роль армянских поэтов этого периода в вызревании идеи народно-освободительной борьбы, наившейся в 1988г. и являющейся отражением надежд и устремлений народа.

В творчестве Сильвы Капутикян следует выделить два последовательно развивающихся мировоззренческих периода. К первому периоду относятся произведения, написанные до 24 апреля 1965г., кульминацией которых является поэма "Раздумья на полпути". Второй период охватывает произведения, созданные после апреля 1965г.